ՔԱՂՎԱԾՔ

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2011թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՇՎԵՏՈՒ ԺՈՂՈՎԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

2012թ. փետրվարի 7-ին տեղի ունեցավ ՀՀ Գեղարքունիքի մարզի Գետիկ համայնքի ընդհանուր ժողով՝ մասնակցությամբ համայնքի 32 բնակիչների, ավագանու անդամների, մարզպետարանի պաշտոնական ներկայացուցիչ Բ. Կրոյանի, նախագահությամբ Խ. Դալլաքյանի , քարտուղարությամբ Վ. Գյուլումյանի.

Օրակարգ. 1. Համայնքի ղեկավարի հաշվետվությունը 2011թ.-ին համայնքում կատարված աշխատանքների մասին (զեկուցող համայնքի ղեկավար Ս. Այունց)

2. 2012թ.-ին համայնքում կատարվելիք աշխատանքների և ծրագրերի մասին (զեկուցող Ս. Այունց)

Լսեցին. 1. Զեկուցող, համայնքի ղեկավար Ս. Այունցը նշեց, որ 2011թ. փետրվարի 27-ին կայացած ՏԻՄ ընտրությունների արդյունքում ընտրվել է Գետիկի համայնքի ղեկավար և ներկայացրեց 2011թ. համայնքում կատարված աշխատանքների մասին ըստ ոլորտների.

ա) Կուլտուր կենցաղային ոլորտ.

Կազմակերպվել է համայնքապետարանի շենքի և նրա հարակից տարածքի վերանորոգման և բարեկարգման աշխատանքներ:

Ամերիկյան USAID-ի բարեգործական կազմակերպության աջակցությամբ կահավորվել է աշխատասենյակները (կահույք, համակարգիչ):

Բնակչության ազատ ժամանցի սենյակի համար ձեռք է բերվել ժամանցի պարագաներ՝ նարդի, շախմատ, դոմինո, շաշկի:

Ուշադրության կենտրոնում է նույն շենքում գործող բուժկետը:

Կատարվել է գյուղի գերեզմանատան հարակից տարածքի մաքրման, աղբահանման, ճանապարհի վերանորոգման աշխատանքներ:

Կազմակերպվել է համայնքի փողոցների և առանձնատների հասցեավորման ցուցանակների գործընթացը:

Մատաղ սերնդին հայ առաքելական եկեղեցուն, նրա արմատներին ավելի խորը ճանաչեցնելու նպատակով Գեղարքունյանց թեմի միջնորդությամբ ամռանը անց է կացվել 10-օրյա ճամբարային հավաք, որից հետո կազմակերպվել է էքսկուրսիա հոգևոր կենտրոններ՝ Գառնի, Գեղարդ, Էջմիածին, Սևանավանք:

Ձեռագործությունը զարգացնելու նպատակով համագործակցել ենք «Շեն» բարեգործական հիմնադրամի հետ, որի արդյունքում համայնքի բնակիչներին բաժանվել է անհրաժեշտ պարագաներ՝ թել, կտոր և այլն:

Գյուղի հարակից տարածքում բացվել է հասարակական սննդի կետ:

բ) Տոնակատարություններ և հիշատակման օրեր.

Ուշադրության կենտրոնում են եղել հայկական և միջազգային հիշարժան օրերը.

Մարտի 8-ին կազմակերպվել է գյուղի միջնակարգ դպրոցի ուսուցչուհիների և համայնքապետարանի աշխատակցուհիների «Մայրության և գեղեցկության» տոնը:

Ապրիլի 24-ին ի հիշատակ Մեծ Եղեռնի զոհերի ծաղկեպսակ է դրվել հարևան Մարտունի համայնքում կառուցված հուշակոթողին:

Մայիսի 9-ին համերգ հավաքույթ է կազմակերպվել համայնքապետարանի բակում, մեծարվել են համագյուղացի Մեծ Հայրենականի և Արցախյան պատերազմի վետերանները, որոնք արժանացել են դրամական պարգևների:

Տարեմուտին համայնքապետարանի միջոցներով մինչև 10 տարեկան երեխաներին և Հայրենական Մեծ պատերազմի վետերաններին տրվել են ամանորյա նվերներ:

գ) *Գյուղատնտեսություն.*

Համայնքում գյուղ. նշանակության հողատեսքերը հետևյալն են՝ վարելահող 294 հա, խոտհարք-209 հա, արոտավայր-2079 հա: Համայնքում առաջնային պրոբլեմներից է գյուղատնտեսական տեխնիկայի սակավությունը: Հողերը վարելու համար սարքին վիճակում կա ընդամենը մեկ թրթուռավոր տրակտոր, որը ժամանակին չի հասցնում կատարել վարի աշխատանքներ՝ պահեստամասերի և վառելանյութի սակավության և թանկացման պատճառով:

Այս և նախորդ տարիների բնակլիմայական վատ պայմանների հետևանքովգյուղացին զրկված էր հացահատիկային կուլտուրաների սեփական սերմացուից: Մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի միջոցով 2011թ. ձեռք է բերվել 7,.5 տոննա գարնանացան գարու և 8 տոննա աշնանացան ցորենի սերմացու: Կատարվել է 30 հա գարնանացանի և 20 հա աշնանացանի աշխատանքներ: Ամռանը տեղացած կարկուտից տուժեց համայնքի գրեթե ողջ ցանքատարածությունները, որից համայնքը կրեց մոտ 15.0 միլիոն դրամի վնաս:

Նույն ամսին բռնկվեց նաև անասունների «Դաբաղ» համաճարակ՝ վնասը կազմեց 26.0 միլիոն դրամ, թռչունների համաճարակը 875.0 հազար դրամ: Ոչ բավարար, բայց հնարավորության սահմաններում ձեռք բերվեցին համապատասխան դեղորայք և միջոցներ, ախտահանվեցին անասնագոմերը, մի քանի անգամ գյուղ հրավիրվեցին ՀՀ գյուղատնտեսության փոխնախարարի գլխավորությամբ համապատասխան մասնագետներ:

Վնասի փոխհատուցման նպատակով կազմվել է համապատասխան ակտեր և ներկայացվել է կառավարությանը:

Վերանորոգվել է գյուղի դաշտամիջյան ճանապարհները, ինչպես նաև վերացվել են անձրևային հեղեղումների պատճառած վնասները:

2011թ. աջակցություն է ցույց տրվել համայնքի մեղվաբույծներին, նրանց ապահովելով որոշ քանակությամբ պրոֆիլակտիկ դեղամիջոցներ:

դ)*Կրթություն.*

Դեռևս վաղ անցյալում գյուղի հիմնախնդիրներից էր մսուր մանկապարտեզի բացակայությունը, որն իր բացասական հետևանքն էր թողնում մատաղ սերունդի թե դաստիարակչական, թե կրթական մակարդակի վրա:

2011թ. մարզպետարանի և ՀՀ գիտության և կրթության նախարարության «Կրթական ծրագրերի» կենտրոնի հետ համագործակցության արդյունքում բացվել է նախակրթարան՝ 7,725 միլիոն դրամ նախահաշվով, որից 3,050 միլիոն դրամը համայնքի և ծնողների ներդրման միջոցներից:

Այն նախատեսված է 3-6 տարեկան 20 երեխաների համար: Երեխաներն ապահովված են սննդով, խաղալիքներով և համապատասխան գույքով: Հարկ է նշել, որ վերջիններս կազմակերպվել են՝ «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի, համագյուղացի Երևանաբնակ «ՎՄՎ ՊՐԻՆՏ» ՍՊԸ-ի տնօրեն Վահրամ Մնացականյանի, «Քաունթերփարթ ինտերնեշնլ» միջազգային հասարակական կազմակերպության աջակցությամբ:

Հոկտեմբեր ամսին կազմակերպվել է համերգ-միջոցառում նախակրթարանի բացման և ուսուցչի օրվա կապակցությամբ:

Դպրոցի լավագույն աշակերտները խրախուսվել են մարզային և հանրապետական ուսումնական օլիմպիադաներում մրցանակային տեղ գրավելու կապակցությամբ:

ե*) Համայնքի բյուջեի կատարում.*

Կանոնավորելով հողային բազան նախորդ տարիների պարտքերը, վերստուգելով հաշվապահական փաստաթղթերը, վերանայելով բյուջեի ծախսային եկամտային բաժինները, աշխատանքներ տանելով բնակչության շրջանում հարկերի հավաքագրման վերաբերյալ, աշխատանքները կազմակերպվեց այնպես, որ թե եռամսյակային և թե ամբողջ տարվա կտրվածքով համայնքի բյուջեն կատարվեց 103.0 %-ով:

Անվանումը	Եկամուտներ		%
	Պլան	Կատարողական	
Հ/հարկ	1247,3	1308,2	104,9
Հ/վարձ	388,0	384,7	99,1
Գույքահարկ	240,6	260,1	108,1
Այլ եկամուտներ	300,0	300,0	100
տեղ/տուրք	20,0	--	--
Դոտացիա	6028,5	6028,5	100
Անասնաբույժ	600,0	300,0	50
Ընդամենը	8824,4	8581,5	97,2

Սեփական եկամուտները կազմեցին 103%

Անվանումը	Ծախսեր		
	Պլան	Կատարողական	%
Աշխատավարձ	5908,1	5908,1	100
Սոց վճար	1202,8	1202,8	100
Էլ.էներգիա	110,0	108,3	98,4
Գործուղում	559,6	528,0	94,3
Թերթի բաժանորդագրում	53,2	53,2	100
Անասնաբույժ	600,0	300,0	50
Հող.ագրոքիմ	15,0	15,0	100
Ճանապարհների վերանորոգում	200,0	200,0	100
Սոցիալական օգնություն	350,0	350,0	100
Ընդամենը	8898,7	8665,4	97,3

ե*) Համագործակցություն տեղական և արտասահմանյան կազմակերպությունների հետ.*

Ակտիվ համագործակցություն կա «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի հետ՝ տնօրեն պարոն Պարույր Ջամբազյան, վերջինիս շնորհիվ գյուղում իրագործվել և իրագործվում են բազմաթիվ բարեգործական ծրագրեր (օգնություն անապահով ընտանիքներին, երեխաներին, ծերերին, ներդրումներ տարբեր ոլորտներում):

Գյուղատնտեսության զարգացման և գյուղմթերքների արտադրության նպատակով համագործակցվել է իտալական «Սլոու Ֆուուդ» և «Մարկո Պոլո» կազմակերպությունների հետ: Նրանց ներկայացուցիչները եղել են համայնքում, ծանոթացել հայ ազգային խոհանոցին և ավանդական ուտեստների պատրաստման

եղանակների հետ: Փոխադարձ այց է կատարվել Իտալիա՝ մասնակցելու պանրի արտադրության միջազգային ցուցահանդեսին, համայնքը ընդգրկված է որպես «Սլոու Ֆուուդ» կազմակերպության անդամ:

Ագրոտուրիզմը զարգացնելու նպատակով համայնքի 9 ընտանիք ընդգրկվել է Լեհաստանի հանրապետության արտաքին գործերի նախարարության հովանավորությամբ գործող «Լեհական զարգացման համագործակցություն-2011» ծրագրին: Նրանց տրամադրվել է համապատասխան շինանյութ առանձնատները վերանորոգելու և բարեկարգելու նպատակով: Այն անհրաժեշտ պայման կհանդիսանա համայնքում տուրիզմի հետագա զարգացման գործընթացին:

Համագործակցություն կա նաև «Շեն», «Վոլդ Վիժեն», «Փյունիկ» բարեգործական ընկերությունների հետ:

Համայնքը հանդիսանում է «Հայաստանի համայնքների միություն» և «Ազատամարտի վետերանների միասնության» հասարակական կազմակերպությունների անդամ:

Օրակարգ 2. 2012թ.-ին համայնքում կատարվելիք աշխատանքների և ծրագրերի մասին
(զեկուցող Ս. Այունց)

Լսեցին. 2. Զեկուցող համայնքի ղեկավար Ս. Այունցը նշեց, որ 2012թ. համայնքը դիմավորել է ուրախ առիթներով՝ հարսանիք-4, նշանդրեք-2, ծնունդ-1: Սույն թվականը համայնքի համար հոբելյանական տարի է՝ գյուղի հիմնադրման 90-ամյակը (1922թ.-ին Արծվաշենից (Հին Բաշքենդ) վերաբնակեցվել է Գետիկ (Նոր Բաշքենդ)), այդ իսկ պատճառով անելիքներ շատ կան: Նախ և առաջ նախատեսվում է գյուղի բարեկարգման աշխատանքներ՝ աղբահանության, գյուղամիջյան ճանապարհների, կոյուղու, ջրահեռացման, հանդիսությունների սրահի, վարչական շենքի դահլիճի, զոհվածների հուշահամալիրի, ջրամբարների և ջրատարի վերանորոգում և վերականգնում, մանկական խաղահրապարակի ձեռքբերում:

Գյուղատնտեսության բնագավառում նախատեսվում է՝ նոր տեխնիկայի և գյուղ գործիքների ձեռքբերում, կոմբայնի կայանատեղի ծածկի վերանորոգում, հողերի կադաստրային ճշտումներ, հողերի հարկային բազայի կենտրոնացումը համայնքում, դաշտերի պահպանության, գյուղատնտեսական ծրագրերի ներգրավման աշխատանքներ:

Արտահայտվեցին 1. Համայնքի բնակիչ Կամո Կարինյանը նշեց,որ կապված հարկային բազայի ճշտումների հետ, մեծ դժգոհություններ կան,քանի որ Թթուջուր,Գետիկ և Մարտունի գյուղերի բազան գտնվում է Մարտունի գյուղում:Նա առաջարկեց ձեռնարկել միջոցներ հարկային բազան այսուհետ տեղում գործելու վերաբերյալ:

Նա առաջարկեց գյուղապետին ուշադրություն դարձնել աշխատատեղերի ստեղծմանը:Նա համայնքապետարանի աշխատանքը գնահատում է բավարար:

2.Շաքար Դանիելյանը նշեց,որ 2011թ. ինքը ստեղծեց գյուղատնտեսական կոպերատիվ,ունի մեծ քանակությամբ անասնագլխաքանակ և վարելահող:Ինքը նոր տեխնիկա ձեռք բերելու համար հայտ է ներկայացրել կառավարություն,բայց մինչ օրս ոչ մի պատասխան չի ստացել:Դրանից հետո մի քանի անգամ գրավոր դիմել է համապատասխան ատյանների,բայց պատասխան չի ստացել:

Շաքար Դանիելյանը համայնքապետարանի աշխատանքը գնահատեց բավարար:

Ժողովի նախագահ----------Խ.Դալլաքյան

Քարտուղար----------Վ.Գյուլումյան